

ԽՈՐՀՐԴԻ 1989 թվականի դեկտեմբերի 21-ի 89/666/ԵՏՀ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՀՐԱՀԱՆԳ

Այլ պետության իրավունքով կարգավորվող որոշակի տեսակի ընկերությունների կողմից անդամ պետությունում բացված մասնաճյուղերին վերաբերող տեղեկությունների հրապարակման պահանջների մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 54-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

Պայմանագրի 58-րդ հոդվածով կարգավորվող ընկերությունների հիմնադրման ազատության իրավունքի իրականացումը խթանելու նպատակով 54(3)(է) հոդվածով և հիմնադրման ազատության սահմանափակումների վերացման վերաբերյալ ընդհանուր ծրագրով անհրաժեշտ է անդամ պետությունների ընկերություններից և ֆիրմաներից՝ իրենց մասնակիցների և այլոց շահերի պաշտպանության համար պահանջվող երաշխիքների համաձայնեցումը,

քանի որ մինչ այժմ հրապարակման մասով այդ համաձայնեցումն իրականացվել է կանոնադրական կապիտալով ընկերությունների վերաբերյալ 68/151/ԵՏՀ(4) առաջին հրահանգի ընդունմամբ՝ 1985 թվականի «Անդամակցության մասին» ակտով կատարված վերջին փոփոխություններով, հաշվի առնելով, որ համաձայնեցումն իրականացվել է նաև հաշվապահական հաշվառման ոլորտում «Որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին» 78/660/ԵՏՀ(5) չորրորդ հրահանգի ընդունմամբ՝ 1985 թվականի «Անդամակցության մասին» ակտով կատարված վերջին փոփոխություններով, «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» 83/349/ԵՏՀ(6) հրահանգի ընդունմամբ՝ 1985 թվականի «Անդամակցության մասին» ակտով կատարված փոփոխություններով և «Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի՝ պարտադիր աուդիտի (օրենքով նախատեսված) անցկացման համար պատասխանատու անձանց մասին» 84/253/ԵՏՀ(7) ութերորդ հրահանգի ընդունմամբ,

քանի որ վերը նշված հրահանգները կիրառվում են միայն ընկերությունների, այլ ոչ դրանց մասնաճյուղերի նկատմամբ, հաշվի առնելով, որ մասնաճյուղերի, ինչպես դուստր ընկերությունների ստեղծումն այն հնարավորություններից մեկն է, որն ընկերությունները ներկայումս կարող են օգտագործել՝ մեկ այլ անդամ պետությունում իրականացնելու հիմնադրման իրենց իրավունքը,

քանի որ մասնաճյուղերի մասով համաձայնեցման բացակայությունը, մասնավորապես, տեղեկությունների հրապարակման առումով, բաժնետերերի և

երրորդ անձանց պաշտպանության հարցում որոշակի անհամապատասխանություններ է առաջացնում այլ անդամ պետություններում մասնաճյուղերի և դուստր ընկերությունների միջոցով գործող ընկերությունների միջև,

քանի որ այս ոլորտում անդամ պետությունների իրավական համակարգերի միջև առկա տարբերությունները կարող են խոչընդոտել հիմնադրման իրավունքի իրականացմանը, հաշվի առնելով, որ, այսպիսով, անհրաժեշտ է վերացնել նման տարբերությունները՝ պաշտպանելու, մասնավորապես, այդ իրավունքի իրականացումը,

քանի որ մասնաճյուղերի միջոցով ընկերությունների հետ առնչվող անձանց պաշտպանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հրապարակման մասով միջոցառումներ իրականացնել այն անդամ պետությունում, որտեղ գտնվում է տվյալ մասնաճյուղը, հաշվի առնելով, որ որոշ առումներով մասնաճյուղի տնտեսական և սոցիալական ազդեցությունը կարող է համեմատվել դուստր ընկերության տնտեսական ու սոցիալական ազդեցության հետ և, քանի որ մասնաճյուղում ընկերությունների տվյալների հրապարակման հարցում հանրային հետաքրքրություն է առկա, մինչդեռ նման հրապարակման համար անհրաժեշտ է օգտագործել Համայնքում կանոնադրական կապիտալ ունեցող ընկերությունների համար գործող ընթացակարգերը,

քանի որ նման հրապարակումն առնչվում է մի շարք կարևոր փաստաթղթերի, մանրամասն տեղեկություններին և դրանցում կատարված փոփոխություններին,

քանի որ նման հրապարակումը, բացառությամբ ներկայացուցչության իրավասությունների, ընկերության անվանման, իրավական ձևի, գործունեության դադարման և սնանկության վարույթների, կարող է սահմանափակվել մասնաճյուղին վերաբերող տեղեկություններով՝ հղում կատարելով այն ընկերության գրանցամատյանին, որի մասն է կազմում մասնաճյուղը, քանի որ Համայնքում գործող նորմերի համաձայն, ընկերությունների մասին ցանկացած տեղեկություն առկա է այդ գրանցամատյանում,

քանի որ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի մշակման, աուդիտի և հրապարակման մասին ներպետական իրավունքի համապատասխանեցումից հետո մասնաճյուղի հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հրապարակման մասին ներպետական դրույթներն այլևս չեն կարող հիմք հանդիսանալ, հաշվի առնելով, որ բավարար է մասնաճյուղի գրանցամատյանում հրապարակել ընկերության կողմից աուդիտի ենթարկված և հրապարակված հաշվապահական հաշվառման փաստաթղթերը,

քանի որ մասնաճյուղի կողմից օգտագործվող նամակներն ու պատվերի ձևաթղթերը պետք է պարունակեն միևնույն տեղեկությունները, ինչ ընկերության կողմից օգտագործվող նամակներն ու պատվերի ձևաթղթերն են պարունակում և նշեն այն գրանցամատյանը, որտեղ գրանցված է մասնաճյուղը,

քանի որ սույն Հրահանգի նպատակներն ամբողջությամբ իրականացնելու և ընկերության ծագման երկրի հիման վրա խտրականության ցանկացած դրսևորումից խուսափելու համար սույն Հրահանգը պետք է նաև տարածվի ոչ անդամ պետությունների իրավունքով կարգավորվող և 68/151/ԵՏՀ հրահանգի կարգավորման առարկան հանդիսացող ընկերությունների իրավական ձևին համապատասխանող ընկերությունների կողմից հիմնադրված մասնաճյուղերի գործունեության վրա, քանի որ այս մասնաճյուղերի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել այլ անդամ պետությունների իրավունքով կարգավորվող ընկերությունների մասնաճյուղերի նկատմամբ կիրառվող դրույթներից տարբերվող այլ դրույթներ՝ հաշվի առնելով, որ վերը նշված հրահանգները չեն տարածվում ոչ անդամ պետությունների ընկերությունների վրա,

քանի որ սույն Հրահանգը ոչ մի կերպ չի անդրադառնում այլ իրավական նորմերով, ինչպես օրինակ, աշխատողների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքներին առնչվող աշխատանքային իրավունքի, ինչպես նաև հարկային իրավունքի նորմերով կարգավորվող՝ մասնաճյուղերի կողմից տեղեկությունների հրապարակման պահանջներին.

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

Այլ անդամ պետություններում ստեղծված ընկերությունների մասնաճյուղերը

Հոդված 1

1. Մեկ այլ անդամ պետության իրավունքով կարգավորվող և 68/151/ԵՏՀ հրահանգի կարգավորման առարկան հանդիսացող ընկերության կողմից բացված մասնաճյուղին վերաբերող փաստաթղթերը և մանրամասն տվյալները հրապարակվում են այն անդամ պետության իրավունքի համաձայն, որտեղ բացվել է մասնաճյուղը՝ համաձայն այդ հրահանգի 3-րդ հոդվածի:

2. Եթե մասնաճյուղի մասին տեղեկությունների հրապարակման պահանջները տարբերվում են ընկերության միևնույն պահանջներից, ապա մասնաճյուղի հետ իրականացվող գործարքների դեպքում մասնաճյուղի մասին տեղեկությունների հրապարակման պահանջները գերակայում են:

Հոդված 2

1. Առաջին հոդվածով նախատեսված պարտադիր հրապարակման ենթակա են միայն հետևյալ փաստաթղթերը և մանրամասն տեղեկությունները՝

ա) մասնաճյուղի հասցեն.

բ) մասնաճյուղի գործունեությունը.

զ) գրանցամատյանը, որում պահվում են Խորհրդի 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածով նախատեսված ընկերության գործերը՝ տվյալ գրանցամատյանում ընկերության գրանցման համարի հետ միասին.

դ) ընկերության անվանումն ու իրավական ձևը, ինչպես նաև մասնաճյուղի անվանումը, եթե այն տարբեր է ընկերության անվանումից.

ե) երրորդ անձանց հետ հարաբերություններում և իրավական վարույթներում ընկերությանը ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց պաշտոնի նշանակման, պաշտոնանկության և այդ անձանց մասին տեղեկություններ՝

- որպես ընկերության մարմին՝ ստեղծված օրենքի համաձայն կամ որպես ցանկացած նման մարմնի անդամներ՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 2(1)(դ) հոդվածով սահմանված՝ ընկերության կողմից հրապարակման պահանջների համաձայն.

- որպես ընկերության մշտական ներկայացուցիչներ, որոնք պատասխանատու են մասնաճյուղի գործունեության համար՝ նշելով վերջիններիս լիազորությունների շրջանակը.

զ) ընկերության գործունեության դադարման, լուծարողների նշանակման, վերջիններիս և նրանց լիազորությունների, ինչպես նաև լուծարման գործընթացի դադարեցման վերաբերյալ մանրամասն տեղեկություններ՝ 68/151/ԵՏՀ հրահանգի հոդվածի 2(1)(ը), (ժ) և (ժա)–ով նախատեսված՝ ընկերությունների կողմից հրապարակման պահանջների համաձայն.

-անանկության վարույթներ, պարտատերերի պահանջների բավարարման հետաձգում, ընկերության վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցառումներ կամ նմանատիպ այլ ընթացակարգեր, որոնցում ընդգրկված է տվյալ ընկերությունը.

է) հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ համաձայն 3-րդ հոդվածի.

ը) մասնաճյուղի փակումը:

2. Այն անդամ պետությունը, որի տարածքում բացվել է մասնաճյուղը, կարող է, 1-ին հոդվածով սահմանված կարգով, նախատեսել հրապարակման համար հետևյալ պահանջները՝

ա) սույն հոդվածի 1(ե) և (զ)–ում նշված անձանց ստորագրությունները.

բ) հիմնադիր փաստաթղթեր, հիմնադրման մասին արձանագրություն ու կանոնադրություն, եթե դրանք կազմված են առանձին փաստաթղթերով, դրանցում կատարված փոփոխությունների հետ միասին՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 2(1)(ա), (բ) և (զ) հոդվածով սահմանված կարգով.

գ) սույն հոդվածի 1(զ) պարբերությունով նախատեսված գրանցամատյանից ընկերությունների գրանցման մասին հավաստագիր.

դ) այդ անդամ պետությունում գտնվող ընկերության սեփականության նկատմամբ գործող (պարտավորությունների) ապահովման միջոցների մասին տեղեկություններ՝ պայմանով, որ նման տեղեկությունների հրապարակումը վերաբերում է նշված միջոցների վավերությանը:

Հոդված 3

2(1)(է) հոդվածով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա են միայն ընկերությունների հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես կազմվել են, աուդիտի ենթարկվել և հրապարակվել այն անդամ պետության իրավունքի համաձայն, որով կարգավորվում է ընկերության գործունեությունը՝ 78/660/ԵՏՀ, 83/349/ԵՏՀ և 84/253/ԵՏՀ հրահանգների համաձայն:

Հոդված 4

Անդամ պետությունը, որտեղ բացվել է ընկերության մասնաճյուղը, կարող է սահմանել, որ 2(2)(բ) հոդվածով ու 3-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը հրատարակվեն Համայնքի մեկ այլ պաշտոնական լեզվով, և նման փաստաթղթերի թարգմանությունները վավերացվեն:

Հոդված 5

Եթե ընկերությունն անդամ պետությունում բացել է մեկից ավելի մասնաճյուղ, 2(2)(բ) հոդվածով ու 3-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները կարող են հրապարակվել ընկերության նախընտրած մասնաճյուղի գրանցամատյանում:

Այս պարագայում, մյուս մասնաճյուղերի կողմից պարտադիր հրապարակման են ենթակա այն մասնաճյուղի գրանցամատյանի մասին մանրամասն տեղեկությունները, որում կատարվել է հրապարակումը, այդ թվում՝ այդ գրանցամատյանում տվյալ մասնաճյուղի գրանցման համարը:

Հոդված 6

Անդամ պետությունները պետք է սահմանեն, որ մասնաճյուղի կողմից օգտագործվող նամակներում և պատվերի ձևաթղթերում, ի հավելումն 68/151/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների, նշվում է այն գրանցամատյանը, որտեղ պահվում են մասնաճյուղերի գործերը՝ տվյալ գրանցամատյանում մասնաճյուղի գրանցման համարի հետ միասին:

ԲԱԺԻՆ II

Երրորդ երկրներում ստեղծված ընկերությունների մասնաճյուղերը

Հոդված 7

1. Անդամ պետությունում՝ անդամ պետության իրավունքով չկարգավորվող, սակայն 68/151/ԵՏՀ հրահանգով կարգավորվող որոշակի տեսակի ընկերության իրավական ձևին համապատասխան տեսակի ընկերության կողմից բացված մասնաճյուղին վերաբերող փաստաթղթերը և մանրամասն տեղեկությունները հրապարակվում են այն անդամ պետության իրավունքի համաձայն, որտեղ բացվել է մասնաճյուղը՝ այդ հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Կիրառվում է 1(2) հոդվածը:

Հոդված 8

7-րդ հոդվածով նախատեսված պարտադիր հրապարակման են ենթակա առնվազն հետևյալ փաստաթղթերը և մանրամասն տեղեկությունները՝

ա) մասնաճյուղի հասցեն.

բ) մասնաճյուղի գործունեությունը.

գ) այն պետության իրավունքը, որով կարգավորվում է ընկերության գործունեությունը.

դ) գրանցամատյանը, որտեղ գրանցված է ընկերությունը և տվյալ ընկերության գրանցման համարը, եթե դա նախատեսված է տվյալ անդամ պետության իրավունքով.

ե) հիմնադիր փաստաթղթերը և հիմնադրման մասին արձանագրությունը ու կանոնադրությունը, եթե դրանք կազմված են առանձին փաստաթղթերով՝ դրանցում կատարված փոփոխությունների հետ միասին.

զ) ընկերության իրավական ձևը, ձեռնարկատիրական գործունեության իրականացման հիմնական վայրն ու ընկերության նպատակը և առնվազն տարեկան կտրվածքով տեղաբաշխված կապիտալի չափը, եթե այս տվյալները զետեղված չեն (ե) ենթապարբերությունում նշված փաստաթղթերում.

է) ընկերության անվանումը և մասնաճյուղի անվանումը, եթե այն տարբեր է ընկերության անվանումից.

ը) երրորդ անձանց հետ հարաբերություններում և իրավական վարույթներում ընկերությունը ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց պաշտոնի նշանակման, պաշտոնանկության և այդ անձանց մասին տվյալները՝

- որպես ընկերության մարմին՝ ստեղծված օրենքի համաձայն կամ որպես ցանկացած նման մարմնի անդամներ.

- որպես ընկերության մշտական ներկայացուցիչներ, որոնք պատասխանատու են մասնաճյուղի գործունեության համար:

Պետք է սահմանվեն ընկերությունը ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց լիազորությունների շրջանակը, ինչպես նաև առանձին կամ համատեղ գործելու լիազորությունը:

թ)

- ընկերությունների գործունեության դադարման, լուծարողների նշանակման, վերջիններիս և նրանց լիազորությունների, ինչպես նաև լուծարման գործընթացի դադարեցման վերաբերյալ մանրամասն տեղեկություններ.

- սնանկության վարույթներ, պարտատերերի պահանջների բավարարման հետաձգում, ընկերության վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցառումներ կամ նմանատիպ այլ ընթացակարգեր, որոնցում ընդգրկված է տվյալ ընկերությունը.

ժ) հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ 7-րդ հոդվածով սահմանված կարգով.

ժա) մասնաճյուղի փակումը:

Հոդված 9

1. 8(1)(ժ) հոդվածով նախատեսված պարտադիր հրապարակման ենթակա են ընկերությունների հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես կազմվել են, աուդիտի ենթարկվել և հրապարակվել՝ ընկերության գործունեությունը կարգավորող անդամ պետության իրավունքի համաձայն: Եթե դրանք կազմված չեն 78/660/ԵՏՀ և 83/349/ԵՏՀ հրահանգների համաձայն կամ հավասարեցված չեն դրանցով սահմանված կարգով կազմվածներին, անդամ պետությունները կարող են պահանջել, որ մասնաճյուղի գործունեությանը վերաբերող հաշվապահական հաշվառման փաստաթղթերը կազմվեն և հրապարակվեն:

2. Կիրառվում են 4-րդ և 5-րդ հոդվածները:

Հոդված 10

Անդամ պետությունները պետք է սահմանեն, որ մասնաճյուղի կողմից օգտագործվող նամակներում և պատվերի ձևաթղթերում նշվի այն գրանցամատյանը, որտեղ պահվում են մասնաճյուղի գործերը՝ այդ գրանցամատյանում մասնաճյուղի գրանցման համարի հետ միասին: Եթե այն անդամ պետության իրավունքը, որով կարգավորվում է ընկերության գործունեությունը, պահանջում է գրառում

գրանցամատյանում, ապա պետք է նշվի նաև ընկերության մասին տեղեկատվություն պարունակող գրանցամատյանը և ընկերության գրանցման համարը:

ԲԱԺԻՆ III

Ընկերության տարեկան զեկույցում մասնաճյուղերի մասին նշումը

Հոդված 11

78/660/ԵՏՀ հրահանգի 46(2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ ենթապարբերությամբ՝

«ե) ընկերության մասնաճյուղերի առկայությունը»:

ԲԱԺԻՆ IV

Անցումային և եզրափակիչ դրույթներ

Հոդված 12

Անդամ պետությունները նախատեսում են համապատասխան պատժամիջոցներ՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով սահմանված տեղեկությունները չհրապարակելու և 6-րդ ու 10-րդ հոդվածներով նախատեսված պարտադիր տեղեկությունները նամակներում և պատվերի ձևաթղթերում չնշելու համար:

Հոդված 13

Յուրաքանչյուր անդամ պետություն որոշում է, թե ով պետք է իրականացնի սույն Հրահանգով նախատեսված տվյալների հրապարակման հետ կապված ձևականությունները:

Հոդված 14

1. 3-րդ և 9-րդ հոդվածները չեն տարածվում 89/117/ԵՏՀ (8) հրահանգի կարգավորման առարկան հանդիսացող վարկային ու ֆինանսական կազմակերպությունների կողմից բացված մասնաճյուղերի վրա:

2. Անդամ պետությունները կարող են չկիրառել 3-րդ և 9-րդ հոդվածները ապահովագրական ընկերությունների կողմից բացված մասնաճյուղերի նկատմամբ, քանի որ առկա է հետագա համապատասխանեցման անհրաժեշտությունը:

Հոդված 15

Դադարեցնել 78/660/ԵՏՀ հրահանգի 54-րդ և 83/349/ԵՏՀ հրահանգի 48-րդ հոդվածների գործողությունը:

Հողված 16

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն սույն Հրահանգը կատարելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր (այլ նորմատիվ իրավական ակտեր) և վարչական ակտեր ոչ ուշ, քան 1992 թվականի հունվարի 1-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները սահմանում են, որ 1-ին պարբերությամբ նախատեսված դրույթները կիրառվում են 1993 թվականի հունվարի 1-ից, մինչդեռ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի մասով դրանք առաջին անգամ կիրառվում են 1993 թվականի հունվարի 1-ից սկսվող ֆինանսական տարվա տարեկան ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ կամ 1993 թվականի ընթացքում:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հողված 17

78/660/ԵՏՀ հրահանգի 52-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կապն ապահովող կոմիտեն՝

ա) չսահմանափակելով Համաձայնագրի 169-րդ և 170-րդ հոդվածների գործողությունը՝ խթանում է սույն Հրահանգի համակարգված կիրարկումը կանոնավոր հանդիպումների միջոցով, որի ընթացքում շոշափվում են, մասնավորապես, դրա կիրարկման հետ կապված գործնական խնդիրներ:

բ) անհրաժեշտության դեպքում, սույն Հրահանգում կատարվող լրացումների կամ փոփոխությունների առնչությամբ խորհրդատվություն է տրամադրում Հանձնաժողովին:

Հողված 18

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1989 թվականի դեկտեմբերի 21-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ե. Քրեսոն

- 1) ՊՏ, թիվ C 105, 21. 04. 1988թ., էջ 6:
- 2) ՊՏ, թիվ C 345, 21. 12. 1987թ., էջ 76 և ՊՏ թիվ C 256, 9.10.1989թ., էջ 27:
- 3) ՊՏ, թիվ C 319, 30. 11. 1987թ., էջ 61:
- 4) ՊՏ, թիվ L 65, 14. 03. 1968թ., էջ 8:
- 5) ՊՏ, թիվ L 222, 14. 08. 1978թ., էջ 11:
- 6) ՊՏ, թիվ L 193, 18. 07. 1983թ., էջ 1:
- 7) ՊՏ, թիվ L 126, 12. 5. 1984թ., էջ 20 (8) և ՊՏ թիվ L 44, 16. 02. 1989թ., էջ 40: